



ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ Ա. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Փետրվարի 22-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետն այցելում է Երևանի ա. Սարգիս եկեղեցի:

Նորին սրբությանն ընկերակցում էին Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպ. Բերբերյանը, տ. Մասիս վրդ. Գալստյանը, գավազանակիր տ. Մոմիկ արք. Սարգսյանը և Միսաք արկ. Մարգարյանը:

Երևանում, ա. Սարգիս եկեղեցու հրապարակի վրա, Հայոց Հայրապետին դիմավորում և բարի գալուստ է մաղթում Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը՝ շրջապատված քահանա հայրերով, թեմական և եկեղեցական խորհուրդների անդամներով և հավատացյալների հոծ բազմությամբ:

Եկեղեցու զանգերի ուրախ դողանքի ներքո Հայոց Հայրապետը «Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի և, իր ուխտն ու երկրպագությունը կատարելուց հետո, օրհնում հավատացյալներին:

Այս ուրախ առիթով օրվա հանդիսավոր սուրբ պատարագը մատուցում է տ. Արսեն եպ. Բերբերյանը:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը հետևյալ ոգեշունչ քարոզով մխիթարում է հավատացյալներին.

ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ

«Փառք քեզ, Աստուած, փառք քեզ, յաղագս յամենայնի, Տէր, փառք քեզ»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այս փառաբանության և գոհության խոսքով ուզում ենք սկսել այսօր Մեր քարոզը՝ ուղղւալ ձեզ բոլորիդ: Ծջմարտապես զգում ենք Մեր հոգու մեջ այս պահին խոր գոհունակություն, որ գտնվում ենք այս պատմական սուրբ տաճարի հարկի ներքո, ձեր բոլորի ներկայության: Մենք գալիս ենք սուրբ Էջմիածնից՝ բերելու ամենքիդ հայրական սիրո ողջույն և կենարար օրհնություն Փրկչի Իջման սուրբ Մեղանից՝ լավագույն բարի մաղթանքներով հանդերձ:

Մեր ողջույնը սիրո և օրհնությունը բերում ենք նաև Արարատյան թեմի Մեր փոխանորդ գերաշնորհ Կոմիտաս արքեպիսկոպոսին, Մեր բարեջան գործակիցը այս հայրապետական թեմում, որ կորովով, հոգով ջերմությամբ և հարատև աշխատանքով կատարում է իր պարտքը լավագույն արդյունքներով:

Բերում ենք նաև Մեր ողջույնը բարեկրոն հոգևոր սպասավորներին այս սուրբ եկեղեցվո, արժանապատիվ քահանա հայրերին, թեմական խորհրդո և սուրբ Սարգիս եկեղեցվո վարչական անդամներին, որոնց զլուխը գտնվում է բարեպաշտ մեր ազգա-

յիններից պարոն Մուշեղ Սերոբյանը՝ իր բոլոր ազնիվ գործակիցներով:

Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում նույնպես այս եկեղեցվո պաշտոնության, եկեղեցվո երգեցիկ խմբին, բոլոր շինարարներին, ճարտարապետներին, վարպետներին և բանվորներին, որոնք բազում տարիներն ի վեր աշխատում են, տքնում են, քրտինք են թափում, որպեսզի այս տաճարը հետզհետե իր փառավոր տեսքը ունենա վերակառուցման և բարեզարդման աշխատանքներով, աշխատանքներ, որոնք իրենց ավարտին են մոտենում:

Սիրելի ժողովուրդ, արդեն ավելի քան քսան տարիներ է, որ Աստուծո ողորմությամբ սուրբ Էջմիածնում ջանում ենք Մեր պարտականությունը կատարել իբրև Հայոց Հայրապետ: Մեր գահակալության առաջին իսկ օրերից, 1955 թվականի հոկտեմբերից անմիջապես հետո, Մենք ծրագրեցինք, մշակեցինք բարեկարգելու, վերակառուցելու և բարեզարդելու և՛ Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը, և՛ մեր երկրի բազմաթիվ սրբավայրերն ու եկեղեցիները:

Փառք Տիրոջը, որ, շնորհիվ մեր պետական իշխանությանց վերին աստիճանի բարյացակամ վերաբերմունքի և բարոյական օժանդակության, շնորհիվ հայաստանցի ժողովրդի և արտասահմանի մեր հավատացյալների առատաձեռնության, կարողացանք մեծ չափով Մեր շինարարական ծրագիրները կենսագործել:

Ահա մոտ յոթ-ութ տարիներն ի վեր սկսվեցին սուրբ Սարգիս եկեղեցու վերակառուցման աշխատանքները՝ նախկին թեմակալ առաջնորդ տ. Վահան եպիսկոպոսի շրջանից, աշխատանքներ, որոնք շարունակվեցին տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի առաջնորդության տարիներին առավել թափով: Այս առիթով պետք է հայտնենք Մեր երախտագիտությունը մեր պետական իշխանություններին, որոնք, հոգատար զգացումներով տոգորված դեպի մեր պատմական հուշարձանները, Մեզ օժանդակեցին ամեն կերպիվ, որպեսզի մեր աշխատանքները հաջող ընթացք ունենան: Բազում տեսակի դժվարություններ հաղթահարվեցին և մեծ ջանքեր ի գործ դրվեցին, որպեսզի այս տաճարը փառավոր մի նոր տեսք ստանա, իսկական մի Մայր տաճարի վերածվի, ինչ որ անհրաժեշտ էր մեր վերածնված հայրենիքի մայրաքաղաքի՝ Երևանի երկնքի տակ: Եվ այդպես էլ ստացվեց, ինչպես տեսնում եք:

Այստեղ Մենք պետք է խորին երախտագիտությամբ հիշենք նաև երկու անուններ՝ Գևորգ և Հովհաննես Քյուրքչյանների, եր-

կու պատվական երիտասարդ ազգայինների անունները, որոնք բնակվում են Լոռի գոտում՝ հեռավոր Անգլիայի մայրաքաղաքում: Ահա այս երկու երիտասարդները, բարեպաշտ զավակները տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքչյանների, տակավին տարիներ առաջ ուխտ կատարեցին և իրենց վրա վերցրեցին ծախսերը՝ սուրբ Սարգիս եկեղեցու վերակառուցման: Քյուրքչյան եղբայրները պիտի հրավիրվին Հայաստան առաջիկա հոկտեմբերին, Մեր գահակալության 20-րդ տարեդարձի հանդիսությունների առիթով, երբ մի փառավոր հանդիսություն էլ պետք է կազմակերպենք այստեղ՝ սուրբ Սարգիս եկեղեցում, նրանց՝ բարեբարների ներկայության: Վստահ ենք, թե մենք բոլորս և դուք, սիրելի ժողովուրդ, սիրով և երախտագիտության զգացումներով պիտի շրջապատեք նրանց այստեղ: Տա Աստված աշխարհին խաղաղություն, որպեսզի ապահով ու երջանիկ պայմաններում վայելենք հառաջիկա աշնան հոգեկան ուրախության պահեր:

Օգտագործեցինք խաղաղություն բառը: Սա անշուշտ մի պատահական մաղթանք չէ, այլ սրտից բխած Մեր ամենամկրահական իղձն է, որ մեր կյանքի խաղաղությունը չխանգարվի: Տեսնում եք, լսում եք, կարդում եք, թե քանի՝ քանի՝ տեղեր աշխարհում, մեկ այստեղ, մեկ այնտեղ վերջին 10—20 տարիների ընթացքում ինչքան արյունահեղություններ են լինում, ինչքան ողբերգություններ են կատարվում, ինչքան մարդիկ են կոտորվում: Հենց վերջերս Մեր սրտին մոտ Լիբանանի մեջ տասնյակ հազարավոր մարդիկ մահացան մերքին քաղաքացիական անհամաձայնությանց հետևանքով, որ զոհ գնացին նաև մոտ 150—200 հայ ժողովրդի անմեղ զավակներ: Էլ չենք խոսի, դուք գիտեք հարկավ, անթիվ և անհաշվելի նյութական կորուստների մասին: Ահավասիկ մի իրադրություն մեր այսօրվա աշխարհի հորիզոնի վրա, որ Մեզ մտահոգություն է պատճառում և նույնիսկ մտատանջություն: Եվ ինչքան երջանիկ ենք մենք, որ մեր տան մեջ, մեր հայրենի հողի վրա, Սովետական Միության մեջ ընդհանրապես, կայուն և տևական խաղաղ և ապահով կյանք է տիրապետում: Սա, սիրելի ժողովուրդ, մի մեծ բախտավորություն է, մի մեծ երկնային պարգև մեզ համար, մանավանդ մեզ համար, հայ ժողովրդի համար, որ անցյալում այնքան տառապել է պատերազմների և այլ և այլ արհավիրքների հետևանքով. դուք այդ բոլորը շատ լավ գիտեք: Առավելապես մենք, իբրև փոքր ժողովուրդ, իբրև անցյալում

տանջված ազգ պետք է գիտնանք զնահատել մեր հայրենի այսօրվա խաղաղ ու անվտանգ, ապահով և երջանիկ առաջընթաց կյանքը: Այս օրերին Մոսկվայում տեղի պետք է ունենա Սովետական Միության եղբայրական բոլոր հանրապետությունների մի մեծ համագումար, որ պետք է զբաղվի Սովետական Միության ժողովուրդների կյանքի ապագայի զարգացման հետ կապված հարցերով: Մենք վստահ ենք, թե այդ ժողովում, այդ մեծ համագումարում, անպայման մեր սովետական կառավարությունը մի անգամ ևս պիտի հռչակի աշխարհին խաղաղության հրամայական անհրաժեշտությունը: Մի անգամ ևս պետք է ընդգծի խաղաղությունը պահպանելու և ամրապնդելու գաղափարը ո՛չ միայն մեր երկրում, այլև ամբողջ աշխարհում: Մենք բոլորս գիտենք, որ մեր պետությունը՝ Սովետական Միությունը, այսօր համաշխարհային կյանքի մեջ խաղաղության և ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ամենահզոր դրոշակակիրն է: Մեր պետության խաղաղասիրական այս քաղաքականությունը մեզ՝ քրիստոնյաներիս ուրախացնում է, ոգևորում է, որովհետև իբրև քրիստոնյաներ, իբրև Ավետարանի քարոզողներ խաղաղության, սիրո և ժողովուրդների բարեկամության իդեալները կնկատենք նաև մեր սեփական, մեր քրիստոնեական իդեալները, մեր հավատքից բխած գաղափարները: Հիսուսի Ավետարանն ամեն բանե վեր սիրո և խաղաղության մի պատգամ է՝ ուղղված համայն աշխարհին, բոլոր ժողովուրդներին բոլոր ժամանակներում: Բոլորս մեր երախտագիտությունը պետք է հայտնենք մեր պետական իշխանության՝ այս խաղաղասիրական քաղաքականության համար: Պետք է ձեռք առնենք նաև, որ Մոսկվայում երևի առաջիկա տարի, զարմանք, տեղի պիտի ունենա մի այլ մեծ համագումար՝ աշխարհի բոլոր եկեղեցիների և բոլոր կրոնքների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ պիտի քննարկվեն աշխարհի խաղաղության պահպանման հետ կապված հարցեր: Այդ համագումարին անշուշտ պիտի մասնակցենք նաև Մենք, պիտի մասնակցի Հայաստանյայց եկեղեցին:

Միրելի ժողովուրդ, ահավասիկ այն մի քանի խոհերը, մտածումները և պատգամ-

ները, որ ուզեցինք ձեռք փոխանցել այսօր, այս սուրբ պատարագի պահին: Իբրև հավատացյալներ այս օրերին պատրաստվում ենք ամփոփվել մեր հոգեկան աշխարհի մեջ, որովհետև ահա մոտենում է Մեծ պահոց շրջանը, այն շրջանը, որ զղջումի, խոստովանության և ապաշխարության ժամանակաշրջան ենք համարում: Խղճի պարտք ենք ամփոփվել մեր հոգեկան աշխարհի մեջ, պահոց շրջանին, հոգեպես վերանորոգվել, անդրադառնալ մեր սխալներին, մեր թերություններին, մեր տկարություններին, մեր մեղքերին, եթե եղել են այդպիսի պարագաներ: Չկա մարդ առանց տկարությունների, առանց թերությունների, բայց մարդկային է, որ անդրադառնանք այդ բոլորին և աշխատենք զմեզ սրբազրել, դառնալ ավելի մաքուր մարդ, մաքուր և ազնիվ մեր մտածումների մեջ, մաքուր և ազնիվ մեր զգացումների մեջ, մաքուր և արդար մեր գործերի մեջ, մեր առօրյա կյանքում, մեր ընտանեկան կյանքում, մեր հասարակական և քաղաքացիական կյանքում:

Սուրբ Ավետարանը և Պողոս առաքյալը մանավանդ քանի՜-քանի՜ ձևերով, հուզումնալից խոսքերով կոչ են անում մեզ բոլորիս, որպեսզի թոթափենք մեր վրայից ամեն թերություն, ամեն տկարություն և դառնանք նոր մարդիկ, աշխատենք նմանվել կատարելության, հասնել աստվածային կատարելության: Վերանորոգվել, ծնվել և նոր ուժերով ու նոր լավատեսությամբ դիմել դեպի ապագան, նվիրվել մեր առօրյա կյանքին՝ շինարար և սրբարար իդեալներով տոգորված:

Միրելի ժողովուրդ, այս մաղթանքներով Մենք վերջացնում ենք Մեր այսօրվա քարոզը՝ մի անգամ ևս հայցելով ձեզ բոլորիդ համար աստվածային ողորմություն, օգնականություն և օրհնություն այժմ և հավիտյան ամեն:

Հավարտ ս. պատարագի եկեղեցուն ատրնթեր առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Սրբառության թեմի քահանայից դասին, թեմական և եկեղեցական վարչության անդամներին ու տվեց իր օրհնությունը:

Վերջում Հայոց Հայրապետի պատվին տրվեց հյուրասիրություն:

